

1893

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

ՀԱՅՈՐ ԵԱ ՏՊԻ ԱՊԻԼ

### ԿԵՆՍԱԳԻՐ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ԵԶՆԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՂՔԱՅԻՈՅ

(Տես ԵԱ, թէջ 8)

**Ա**յս Եօնի Մեսորը յետ իւր սառերը կատարելագործելու Հռովհանոսի օգնութեամբ, հոն Մամուսասի մէջ (որ և Պամոս՝ ըստ խոր. և Փառ.) իւր յառաջ յիշուած երկու աշակերտոց՝ որ են Յօվիշան Եղեղացիցին և Յովսէփ Պաղնացի, « խայըն 'ի թարգմանութիւն ձեռն արկեալ (Էր սուրբ զրոց, թ. 408), Խորհրդաբար սկսանելով յառակաց, բոլվանդակ զցսան և երկու (<sup>1</sup>) յայտնիսս (կանոնական ծանուցեալս) և զնոր կտակս

1. Բովինդակ և քանակ և երկու (զի բովինդակն քան զայդ տեելի է) բառերը իրերաց հետ համաձայնելու համար՝ հարկ է իմանալ ըստ հնոց մերթ մի և նոյն հեղինակէ շարադրուած և մերթ մի և նոյն նիւթոյ վերաբերեալ քանի մի զրեբ մէկ հաջուած: Դարձեալ սոյն կերպին մի հաջուած իւրաքանչիւր զրոց բոլոր մասոնքը բովինդակ Մեսորութեանց ընծայել պէտք չէ, այլ և երկրորդ թարգմանչաց: Զայս կ'ակնարկէ Խորենացին երբ կ'ըսէ (Գլ. ԿՈ) Եղնկայ և նորա ընկերաց համուր. « քանզի անզէտք էին մերում արուեստի, 'ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որպ առեալ մեծին Սահակայ և Մեսորորայ զմեզ առաջ քեցին յԱղեքսանդրիա՝ 'ի ինքու պանծալի, 'ի սույգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան». զոր կարելի է այսպէս պարզել. — նոցա այդ անզիտութիւնն յայս լիզուի նկատմամբ շէր հնար լինել. զի ինքն խոկ Խորենացին վկայեց՝ թէ քաջ վարժեալ էին այնու. վարժ նաև ասորերենի և երրայեցերենի, ինչպէս տեսանք. և ինքն դարձեալ (Գլ. ԿՈ) և Կորիւն (էջ 21) կը պատմեն՝ թէ Եղնկեանց

յեղով (1). 'ի հայ բան և (Խոր. Գլ. ԾՊ. — Կոր. Էջ 10). և առնլով իւր թարգմանութիւնը և բոլոր աշակերտը՝ դարձեր էր 'ի Հայաստան : Այդ ամէնն և իւր տարած ուսանող աշակերտաց լեզուական ուսումն ըստ կորեան (Էջ 9, 11) աւարտեր էր իբր երկու տարւոյ շրջանի մէջ, եթէ ոչ և աւելի. զի նոյն իսկ նորա նշանակած տարին՝ վկասմապհոյ հինգերորդն և լիցերորդ՝ սիալ է, որ

դարձէն յետոյ սուրբ գիրք իսկոյն թարգմանուեցան . որով կարօտ չէին կրտսերաց լեզուագիտութեան, որոց գարձէն առաջ արդէն մեռած էին բուն թարգմանիչքն Մեսրոր և Սահակ (Խոր. Գլ. ԿԱ). ապա ուրեմն այդ արուեստն՝ կարեւոր սուրբ գրոց թարգմանութեան՝ էր ըստ իս գիտութիւն նոցա վաւերականութեան և ան վաւերականութեան, նախականուութեան և երկրորդագականուութեան, զոր հիմնովին չանելով թարգմանիչք, չուզեցին յախուռն ամէն գիրք թարգմանել և զոր վաստակիլ. որով «'ի բաղում մասսանց թերացեալ» կը մասր մեր թարգմանութիւնն : Այդ թերին լրացնելու համար կ'երթան խորենացին և այլք յԱզերա սանդրիա, կ'ուսանին նախ Յունաց «պանծալի լեզուն», և այնու կը մտնեն յետոյ 'ի համալսարան եկեւեցական գիտութեանց՝ ուսանելու սուրբ գրոց զիտութիւնը, որ խնդրոյ մեծ նիւթ էր՝ մանաւանդ նոյն գարուց մէջ : Ապա ուրեմն և սուրբ գրոց «թերացեալ մասսանցն» յետոյ և անոնցմէ թարգմանուեցան : — Արա ուրիշ հաւասարիք մ'է յիշեալ մասցորդ գրոց ոմնանց ազատ, և ոչ նման յառաջա դոյն թարգմանուած գրոց՝ խղճամիտ թարգմանութիւն լինելն :

1. Ըստ մեզ 'ի յոյն բնագրէ, զոր կը հաւասարեկ երեք փաստիւ : Առաջին, կորին (Էջ 7-8) և Ղազար (Էջ 35-36) կ'աւանդին՝ թէ երբ Մեսրոր գտաւ համա տառերը՝ զլիսաւորապէս սուրբ գիրքը թարգմանելու և այնու հոգիներ շահելու համար, և կազմեց նոքօք հայ լեզուի կատերը կամ վանկերը, սուրբ գրոց բիւրաւոր անուանց թարգմանութիւնը կատարեալ և դիւրալուր գործելու համար՝ համեմատեց զանոնք (թէ ինչ կերպիւ՝ ուրիշ առթիւ կը յուսամբ բացատրել մեր հասկացումը), Յունաց և ոչ Ասորւց վանկերու հետ (Խոր. Գլ. ԾՊ.) . ապա ուրեմն նա յունարենէ պիտի թարգմանէր սուրբ գիրքը, և այնպէս ևս դորժեց, և ոչ յասորւցն : Երկրորդ, ըստ Փարապեցւոյն (Էջ 43) հայ ազգն մեծ խորշում ունէր նոյն ժամանակ դէպ յայն ամենայն որ Ասորւց էր, և կը խնդրէր յունարենէ թարգմանել սուրբ գիրքը՝ և ոչ բնաւ ասորականէն : և հետևարար նոյնպէս այլ եղաւ : Երրորդ, այն թարգմանութեան մի հետքն «յագեցան խոզենեաւ», (ԺԶ սաղմուէն), զոր ունիմք (տես Էջ 168, ծն. 1), յոյն բնագրին է, ար ասորւցն է ոդդաւզք . ուրեմն թարգմանութիւնն ի յանէ էր :

Խորենացւոյ նշանակած «քասն և երկու» թուոյն համեմատ՝ բոլոր նախականոն գրքերը Մեսրոր և իւրքն թարգմանեցին 'ի Սամոս, և մեծն Սահակ նոցա ոչ մի մասին թարգմանիչ չէ՝ ըստ բուն նշանակութեան բառին . որովհետև նախ՝ Խորենացին ըստ՝ թէ Սամուսատի մէջ ձեռն արկին բովանդակ զրոց թարգմանութեան : Երկրորդ, երբ կորին (Էջ 21) և Խորենացի (Գլ. ԿԱ) կը խօսին սուրբ գրոց յետոյ եղած նորոգութեան նկատմամբ, առաջին թարգմանուածը բոլորը միասին կը կոչեն «փուրանակի թարգմանութիւն» կամ «թարգմանեալ» . ապա աւրեմն այդ կը նշանակէ՝ թէ բոլորն 'ի միասին մի գրչով թարգմանուեր աւարտեր են 'ի Սամոս . ուր ընդ հակառակն եթէ մասն մի 'ի Սամոս Մեսրորէն՝

աւելի սարոյդ կը լինէր՝ եթէ զնէր եօթնետասներորդ և ութնետասներորդ (1)։ Ա . Մշերորայ թարգմանութիւնն տարածուեր և սկսեր էր զործածուիլ ազգի մէջ՝ մինչև երթեղաբան Եղնակայ և ընկերացն։ Ա . Սահակ նոցա բացակայութեան ժամանակ զրադեր էր Մշերուժանայ եկեղեցական գրոց վերայ բերած աւերակները

և մասցեալն՝ ի Հայաստան՝ Սահակէն և յայլոց թարգմանուած լինէր, փոքրանակի չեր լիներ, այլ երեքտ աւելի տարաց գործ։ Երրորդ, պատմիչք ըսկին՝ թէ յետ տասից գիւտին խսկոյն տկան թարգմանել. և սուսպիւ, երեք հոգւով և նշանակեալ (էջ 162) երկու տարաց շափ ժամանակի մէջ՝ յայտնի է թէ կարողացան այդշափ զիրք աւարտել՚ի Սամսոն Զորորդ, ականատես պատմիչք կը յիշեն Մշերորականց աշխատութիւնը, և Սահակայն՝ զոր այնշափ կը մեծարեն և կը պաշտեն, կը լուեն. իսկ Փարապեցոյն կեղծիքը (տես էջ 165, ծն. 1) ապա ուրեմն մասն շունէր նա այս գործոց մէջ։ Վերջին փաստին հակառակ կը թուի կորեան խօսքն (էջ 12), որ յետ Մշերորայ դարձը և յառաջ քան առաջին թարգմանաց երթը պատմելու, կըսէ բովանդակ ուուր գրոց համար, թէ թարգմանուեցան «անկարծ ուրեմն...» ի ձեռն երկուց հաւասարելցոյն։ որոց մին անշուշտ Սահակը կ՚իմանայ. Վեր ի վերոյ ընթերցողն՝ այդ խօսքով մետրորեան թարգմանութիւնը և նորաժամանակակիտը կը հասկանայ, և զՍահակի նոյն ժամանակակիտի և թարգմանութեան մէջ գործակից Մշերորայ. սակայն եթէ ոչ դարձնէ, կը տեսնէ որ այդ տեղ կորին կը յիշատակէն՝ սուրբ գրոց թարգմանութեամբ Հայոց քաղաք պղտուուր, զոր հարկա շահեցան յետ քանի մի տարաց. Ապա ուրեմն նա ընդհանուր օգտին հետ՝ իրրե զայն պատճառող ընդհանուր և գլխաւոր երաժշտաւորաց մին կը յիշէ զՍահակի, իսր մեզմէ այժմ՝ յիշելի (էջ 164) աշխատութեան համար սուրբ գրոց վերայ, և ոչ իրրե մի և նոյն ժամանակ Մշերորայ հետ ՚ի միասին գործող. Որով կորեան խօսքն մեր դէմ շենէր. իսկ և անկարծ ուրեմն» շնչանակեր յանկարծակին՝ մի և նոյն ժամանակ, որ անկարելի էր. այլ երր ոչ որ կը կարծէր կամ կը յուսար թէ Հայք այդպիսի երշանիկ բախտ ունենան, զի շունէին հայերէն զիր և գրութիւն։

1. Վառամշապհոյ թագաւորութիւնն (Խոր. Գլ. ՇԵ. — Փրագ. էջ 48) կը տեսէ 21 տարի. Խորենացին սիալմամբ՝ թագաւորութեան սկիզբը կը դնէ Բ. Շապհոյ կենաց վերջին տարին՝ թ. 379, յորմէ մինչև Ա. Յազկերափ ութերորդ տարին (Կոր. էջ 29) թ. 406, որ ամենասույզն է, յորում եղաւ գրոց զիւսն, Վառամշապհոյ իշխանութիւնն տեսած կը լինի 27 տարի, հակառակ իւր նշանակած թուոյն. և այդու շատ կը համառօտին նորա նախորդաց կենաց թուականքն. իսկ Փարապեցին Վառամշապհոյ մահը դնելով Դ. Շապհոյ կենաց վերջերը թ. 386-388, թագաւորութեան սկիզբը քան զիսրենացին 40 տարի և աւելի ևս առաջ դրած կը լինի, նոյնպէս ծայրացեղ. իսկ կորիւն շատ յետս կը մղէ. Արդ այսպէս կարելի է սուսպիւ զայդ. — Արտաշէս կը թագաւորէ Դ. Վառամայ (Բ. ըստ Խոր. Գլ. ԾԶ). շորորդ տարին՝ թ. 424. Վառամշապհոյ մահէն մինչև այդ տարին՝ ըստ Խորենացոյն կայ և տարի Խորորովու, և Շապհոյ պարսկի, Յ անիշխանութեան, և և ևս ըստ մեզ՝ միլոց երկար վիճերու Վառամշապհոյ յաջորդաց գահակալութեանց սկիզբը. որոց գումարը 12՝ հանելով 424 թուէն, Վառամշապհոյ մահէն կը լինի 412 թուականին, իսկ թագաւոր նստելն 21 տարի առաջ, որ է թ. 391. Ապա

կանգնելու (կոր. էջ 21. — խոր. Գլ. ՄԴ), նախ յասորի լեզուէ (1) և ապա յունականէն: Երբ գարձան՝ և հայրապետն աեսաւ նոցա բերած եօւ թանասանից ընտիր օրինակները, սրովհետեւ ինքն քաջ յունագէտ էր (Փրաք. էջ 42), ուզեց ըստ կամաց սրբոյն Մեսրորայ (Փրաք. էջ 43) անձամբ սրբ- բազեր՝ որ սակաւ և որ աւելի՝ առաջին թարգմանութիւնը, որ ոչ սակաւ թերի էր և այլայլած ուղիղ բնազբէն, Մեսրորայ յունարինի քաջ տեղեակ չինելուն և անընտիր կամ իսանքարուած օրինակէ թարգմանուած լինելուն համար, որոյ հաւաստից է վերստին հիմնովին սրբազութեան ենթարկելու հարկն, որով և աւել, կ'ըսէ կորիւն, (թ. 435) հանդերձ Եզնկաւ՝ զյառաջա- գոյն զյանկարծագիւտ զփութմանակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք և (էջ 21): Նոյնը կ'ըսէ և Ասողիկ (Գիրք Բ. Ա.): Եւ խորենացին (Գլ. ԿԱ), թէ և գարձեալ թարգմանեցին զմիանզամ թարգ- մանեալն փութմանակի (Սամուսատի ԱԼՅ), հանդերձ նորօք (2) վերստին յօրինել

և դանիէլեան գրոց գիւտն (թ. 406) նորա հներորդ տարւոյն եղաւ, և ոչ ճե- րորդին ըստ կորեան: Իսկ Մեսրորայ 'ի Սամուսատ զնալն՝ յետ երկու տար- ւոյ, նոյն իսկ ըստ կորեան (էջ 9), որոյ պատմութիւնն վերստին ներորդ տարւոյն կը զնէ և շարձը ներորդին, որ յայտնի պիտի է, և պիտի լինէր 17երորդ և 18երորդ: Այնպէս իսկ էր անշոշտ երրեմն, գրուած փակ զրութեամբ ժԵ, ժԵ, և ժԸ: որոց առնելին օրինակողի անզգուշութեամբ ժ զեղուեր է, նև մնացեր, ին եղեր Ե, ըն հետևաբար Զ. իսկ այլ ոք փոխեր է, հինգերորդ, հինգերորդ և վեցերոյդ:

1. Յասորւոյն թարգմանածը ոմանք սուրբ գրոց եկեղեցւոյ մէջ ընթեռնի հաս- տուածքը կը համարին: սակայն հարկ է դիտել, որ այդ գործն գրոց զփաւէն վերջ կը լինի, զի յառաջ անկարելի էր: իսկ Մեսրոր տառից հետ նաև բովանդակ սուրբ գիրքը թարգմանած՝ կը բերէ առ Սահակ: որով աւելորդ էր կրկին թարգ- մանել յասորւոյն: ապա թէ ոչ՝ թարգմանութիւն մի ևս յետոյ զնելով նորեկ ընտրելագոյն յոյն բնագրերէ, երեք թարգմանութիւն դրուած կը լինի, որ ան- տվոր է և անհիմն: որովհետեւ խորենացին (Գլ. ԿԱ) խօսելով նկատմամբ վերջ- նոյն, առաջինը կը կոչէ և զմիանզամ թարգմանեալն», և ոչ զերիիցս Նա թէ ոք համարի թէ Մեսրոր մասն մի միայն թարգմանած բերաւ, և միւս եկեղե- ցական կարեւոր մասունքը Սահակ թարգմանեց, — որոյ դէմ պատասխանեցինք (էջ 162, ծճ. 1), — կը յառելումք՝ թէ Մեսրոր 'ի հարկէ ամրողլ յոյն բնագիրը՝ յորմէ մասն մի թարգմանեց, 'ի Հայաստան բերաւ՝ բոլորը թարգմանելու համար: ապա Սահակ ասիկուած շէր թարգմանել «յասորւոյն» յոյ լինելոյ յաւնի և, զի ահա կար: իսկ արդ յիշեալ եկեղեցական գրեանքը կը հարկադրուէր յասորւոյն թարգմանել, ապա ուրեմն՝ նոքա արարողական և այլ նոյնափիսի զբեր էին:

2. Ի՞նչ կ'ակնարկէ արդեօք «նորգ» բառիւ: Յունաստանէ գարձող թարգմա- նիշքը: Այդ իմաստին չիձայնակցիր ականատեսն վկայի՛ կորեան խօսքն, որ կ'ըսէ մի հոգւով, և հանդերձ Եզնկաւ: Աթէ «նորգ» թարգմանիշքն են, յայտնի է թէ կորիւն ևս նոցա մէջ էր: և բնշպէս միայն զԵզնիկ կը զնէ զործակից Սա- հակայ: միթէ մոռացան: իւր գործակցութիւնը: և կամ առ Եզնիկ ունեցած սիրոց

Առողջակամք (1) » : — Հոս է մտազրութեան կէտն. Սահակ Եղնիկը կ'ընտրէ իւր գործակից այդ մեծ գործի մէջ. իմաստնոց վարդապետն՝ « որ յոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք վարդում զիանովլք Յունաց » (Փրա. Էջ 42), իւր իմաստութեամբ և քաջ ընարութեամբ՝ հայաստանեայց այնքան մեծամեծ վարդապետաց, այսինքն քան զեզնիկ երիցազոյն աշակերտաց միջէն՝ զնա միայն կ'ընտրէ իւր աջակից : Խոկ ի՞նչ առաւելութիւն կը տեսնէր արդեօք նորա վերայ՝ արժանի այդշափ պատույ և միրոյ : Անտարակոյս զնա քան զայլս իմաստնազոյն և կարողագոյն կը տեսնէր այդ պաշտաման և իւր գործակցութեան : Ի՞նչ մասմաք : — Նախ՝ քաջ գիտութեամբ յոյն լեզուի, զի էր « քաջ վարժեալ հելլէն զարդութեամբ » . Նորա հետ հաշուէ ասորեթենին և մանաւանդ երրայեցերենին և՝ որ լաւ ծառայեր են մեր թարգմանութեան մէջ, ինչպէս շատ անզամ վկայեր են և կը վկայեն սուրբ զրոց բաղդատաթեան հետամուռ երոպէացի բանասէրը իսկ : Երկրորդ՝ քաջ գիտութեամբ սուրբ զրոց, որ յիշաբի լաւ կը փայլի իւր գործակցութեամբ ուղղուած թարգմանութեան և իւր չքնաղ մատենկոն մէջ, յորոց տեղիս չներեր օրինակներ բերել . մանաւանդ որ շատ զիւրա կարող է գտնել նոցա մէջ ցանկացողն : Այդ երկու ձիքքերն յոյժ կարեւոր էին սուրբ գիրքը թարգմանողին, և աւելի կարեւոր՝ Մեծորոպայ և նորա աշակերտաց թարգմանեալլ սրբազրողին . զի թարգմանութիւնն մի սրբազրելու համար՝ ըստ բնական օրինի հարկ է քան վթարգմանին հմտւալինել : Ազա ուրեմն Եղնիկ յայլմ մասին կատարեալ էր քան զայլս . կատարեալ՝ չկայ տարակոյս՝ միւս խնդրելի յատկութեան մէջ ևս, այն է հայերէն լեզուի լաւ հմտութիւն : — Երբ մեծն Սահակ այնպիսի գործոյ մէջ՝ զոր ոչ ուժեց կը վստահանայց Յունաստանէ դարձող գիտուն բանիրուն աշակերտաց՝ բայց միայն իւր անձին, և անոնցմէ մի միայն նոդի կ'ընտրէ իւր գործակից, յայտնի է՝ թէ այդ ընտրելոյն վերայ իւր անձին շափ վստահութիւն ունէր . և այդ վստահութիւնն՝ ինչպէս ըսինք՝ հաստատուած էր նորա արժանաւորութեան վերայ :

և մոներմութեան համար զրկեց զինքն՝ իւր պատմութեան ձեռամբ՝ հայրապետին դորժակից հոչակուելու արդար պատուէն . և եթէ զինքն զրկեց խոնարհութեամբ, ասկայն չէր կարող զրկել իւր ընկերը, և ըսել (Էջ 1) նոցա՝ որոց յարդորմանմէ կը դրէր իւր պատմութիւնը, թէ դուք մասն շոնէիք այն վստակի մէջ, այլ միայն Եղնիկ : Ազա ուրեմն « Նորգոյն կ'ակնարկէ սուրբ զրոց նորեկ օրինակները : Եւ եթէ թարգմանիշքն իսկ իմանայ, աստի կը հետևէ այս՝ թէ վեր ի վերոյ բացատրութիւն մ'է իւր խօսքն, շուգելով ըսել՝ թէ թարգմանիշներէն որպէս հետ գործեց Սահակ :

։ Այդ հաստատէր և յօրինել նորգմանը բառերդ անտարակոյս նորոգել, փոսփօնել, ուղղել կը նշանակեն : Փարաբեցին (Էջ 43-46) զայր և մեսորեւան թարգմանութիւնը շիճանալիքր, այլ իւր սեփական կուտակցութեամբ՝ հակառակ իւր աղբեր, կորեան, յորմէ առած կը խոստովանի (Էջ 38) իւր պատմութեան նախորդմասն, առաջին և մի միայն թարգմանութիւն կը դնէ, ընծայելով լոկ Սահակայ,

Նման էր մեր առաջին թարգմանութիւնն արձանի, որ որչափ այլ վայելուց համարուի անհմտա մարդոց, այլ յաշ ճարտար արուեստագիտին լի է թերութեամբ. մանաւանդ եթէ նկատենք, որ հայկական բարբառոյ նախիլին արձանացումն էր այն. զոր Սահակ մի կողմէն, և Եղնիկ միւս կողմէն՝ երկու հելլենալիարժ հանճարք՝ իրեւ հմուտ արձանագործներ՝ մտադրութեամբ յղկելով վայելացնելով իրեանց գրչօք, իրեւ հրաշակերտ մի և մեծ նույն ազգին ընծայեցին, չեմ խղճեր ըսել, թէ և բովանդակ իսկ գիտնական աշխարհին: Ապա սոյն մեծ սրբագրութեան պատճառաւ երբ կորին զԱհանակ Մեսրոպաց հետ երախտաւոր թարգմանիչ կը հոչակէ՝ ըսելով (Էջ 42), « Անկարծուեմն օրէնստուսոյց Մովլէս՝ մարգարէական դասուն, և յառաջակէմն Պատու բալննակ առաքելական գնազով, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւու վրիստոսի... 'ի ձեռն երկոց հաւասարելոցն հայաբարբառոց հայերենախօսք դասն», կարող էր նոցա հետ զուգել նաև Եղնիկը, որ Սահակայ հետ արդիւնակից էր Մեսրոպայ. և չիմացներ այն պատճառաւ՝ զի Սահակ միայն էր ուղղակի գործակից Մեսրոպայ, և իրեն յանձնուած սրբագրութեան դործն. և Եղնիկ գործակից Սահակայ, թէպէտ արթեամբք զուգընթաց:

Պատմիչն (Էջ 24) առանց վերջացնելով իւր խօսքը կը շարունակէ, « շատ ևս մեկնութիւն զոց թարգմանէին (ինքեւնք Սահակ և Եղնիկ). և այնպէս զամենայն ժամանակս իրեանց՝ յընթերցուածս զոց ծախէին հարցն զափ և զգիշեր, և նոզիմք ծաղկեալք՝ օրինակ բարեւաց ուսումնասէր առընթերակայից լինէին»: Նաև հոյ մեծ կը ցուցնէ կորին Եղնիկայ վաստակը, կը միացնէ

և այդու շփոթութիւն ձգեր է իւր և նախորդ պատմշաց՝ և այնու բազմաց գորդափարի մէջ. (տես և զքննութիւն Փարպեցւոյն՝ Գրիգոր Խալաթեանի, տպ. 'ի Մովկուա, 1883, Էջ 70): Բայց ինքն իսկ Փարպեցին կը մատնէ զինքն այլուր (Էջ 116) երբ կ'ըսէ. « Յագեցան կերակրաք, ասէ, որ միւս ևս թարգմանութիւնք կային. մին մերորեան, և միւսն՝ դարձեալ նոյնն սրբագրեալ 'ի Սահակայ և յԵղնիկայ: — Այս տեղ միւս թարգմանիլ կարելի էր հասկանալ օտարազգի նշանաւոր թարգմանիչներէն մին. սակայն ամենայն ազգք և թարգմանիչք կերակրովը ունին որդուվիք՝ և ոչ խողենեաւ, (տես Մէկն. սղմա. Հ. Զ. Զ. և լ. տպ. 'ի Վենետ. 1823, հուն. Էջ 70): « Եղնիպէս և եօթանասնիցն ընդհանրապէս. և միայն վերհնոյս քանի մի օրինակը խոզենեօք ունին, որ ծագեր է յունասրէն նախ (որդւովք) սխալմամբ նէ: այս կարդալով: Այդ եօթանասնից տարրեր օրինակն առանձին թարգմանութիւնն մի չկազմեր Յունաց մէջ, ուր Փարպեցին միւս թարգմանիչ մի կը դնէ. ապա ուրեմն յունասրէնէ 'ի Հայ երկու թարգմանիչք կային: — Երկու հայ թարգմանութեանց իրր վկայ կարող եւեք ընդունել նաև սաղմոսաց տարրերութիւնն՝ 'ի մէջ սուրբ գրոց և ժամագրոց. և այլ սուրբ գրոցն՝ ընդհանուրին և մեր հին ինքնազիր հեղինակաց մէջ: « Եղնիպէս Փովլայ Արծուունոյց Խութեցւոց համար ըսածք՝ թէ և գիտեն զաղմոսան զի՞ն թարգմանեասն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ՚ի բերան ունին»: (Էջ 135, տպ. 'ի Կ. պողիս, 1859):

Սահմակայ հետ՝ իրբե ոչինչ պակաս քան զնա արդեամբք, և անբաժան 'ի Սահմակայ' իրբե նորա գուգակիցն, կամ ինչպէս կը կոչէ Մարտին, « սերտագոյն բարեկամն ». և այնպէս կը ներկայացնէ մեղ՝ որպէս թէ յետ Սահմակայ առաջին բազմաշան և արդինաշատ թարգմանիչն նա լինէր . և սուրբ հարց գրոց մեծ մասն մի՛ նորա ձեռամբ թարգմանուած : Այդ կէտն յիշուեցա արդէն, և հոս կ'ուսանիմք ևս՝ թէ Հայոց ուսումնական յառաջաղիմութեան մեծ նպաստողներէն մին է Եղնիկ իր անդոր վաստակով՝ ինչպէս Սահմակ :

Այդ երկու վկայութիւնքն բաւական են Եղնիկ արդեանց չափը մեղ պարզելու : Մեք այսպան միայն հարկ կը համարիմք ըսել, թէ մինչ նորա ընկերքն փութով ասու և անդ եպիսկոպոս կամ հովիլ կը դրուին, Սահմակ չուզելով նորա գեղեցիկ հանճարոյն լոյսը ծածկել արտաքին զբաղանաց զրուանի տակ, չենթարկեց զնա իւր ընկերաց վիճակին . որով քանի մի տարի գործակից մնաց իրեն՝ ուսումնական վաստակի և թարգմանչութեան մէջ. զայս կ'ակնարկէ կուրեան խօսքն, « զամենայն ժամանակի իւրեանց... զուի և զգիշեր » : — թերևս սոյն ժամանակաց մէջ էր՝ յորում Արձան իւր հօտի համար խզճի և բարոյականի հարցումներ կ'ուղղէր առ Եղնիկ՝ որպէս առ հմատ վարդապետ լուծիչ երկրայութեանց, և պատասխան կ'ընդունէր . նոյնպէս և ուրիշ անծանօթ ոմն, (տես Մասեաց աղաւնի, Զ տարի 125, 166) : Այսն ժամանակ կը թարգմանէր նա Առևսաւրչի կանոնքը (տես Արարատ ամազիք, 1875, էջ 446) և Նեղոսի խրատը, ինչպէս յայտնի է իրեն ընծայած խրատական համարածոյն . միայն եթէ այս ինքնապիք չէ : կը շարադրէր նա հոգևոր և զիտնական, մեծ կամ փոքր երկասիրութիւներ, (տես Հ. Չմշ. Պամ. Հց. և 'ի զրշաքիր) . որք կամ կորուսուած են խսպառ՝ և կամ մասամբ միայն պրծած կորսուեան անզութ ժանեաց միջէն . բայց երբեմն ողջ էին, զոր տեսներ և կը վիայէ մեղ կիրակոս՝ թէ « խօս յոլով եթող յօդուա լսողաց » (էջ 17) : — թէպէտ մեղ հասած զանազան հատսաւածներէն ես ումանց նմա շընծայուին 'ի զիտնաց՝ իր անյարմարք նորա հանճարոյն, սակայն մեծ պարծանք է այս Եղնիկ՝ զի նորա պանծալի անանը գրոշմեր են այլք իւրեանց զրուածոց վերայ, նոցա յարդ ստանալու համար :

Ցոյժ չքնաղ է ճառինսրաց մեղ ընծայած մի կոտորակն (1), համաձայն հեղինակին բնիկ ողյն և լեզուին, մնացորդ առ իւր վարդապետն զրած մի թշթոյն՝ « Եղնիկայ առ սուրբն Մաշտոց » վերնագրով, յորում խոր վարդապետութեամբ կը բացատրէ բանին և մարմնոյ սերս միութիւնն 'ի Քրիստոս, և թէ տէրունական մարմինն 'ի Քրիստոս կամ 'ի հաղորդութեան աստուածային կուշելի է : թղթոյդ պատճառը մեք կը համարիմք նեսսուրամիտ թէոզորոսի մոլորսթիւնը՝ որ այն ժամանակ սկսաւ մուտ զործել 'ի Հայաստան (Կոր. էջ 25), որոյ դէմ Եփեսոսի ժողովոյն յառաջադպոյն ազգմամբ Մեսրոբ այդ թուղթը ինպրեց յԵղնիկ, ընզարծակ թուղթ՝ ինչպէս յայտնի է իւր

1. Տես Բազմավէպ, Խլ, էջ 321.

Նիմէն։ Եւ միթէ նա կարօ՞տ էր ուրիշի օգնութեան՝ այդ աղանդոյն դէմ դնելու համար. ոչ. բայց հաւասոյ այնպիսի նորը կէտ մի՝ կը ցանկար նա սրամիտ, նրբահանճար և յատակարան հզնկայ գրչով ևս բացատրել և տալ հաւատացելոց։ Աստի կ'իմանամբ, թէ ո՛քան հանելի և պատալի էր իրեն՝ իւր աշակերտի գրիչն, և կարդալու ժամանակ իւր սրտի և մտաց վերայ ի՛նչ հրճուանց կ'ազգէր, երբ կը խորհէր՝ թէ նորա զօրաւոր և համոզական հրապոյրն պիտի ներգործէր և նուածէր նոյն իսկ ներհուն մոքերը։ Յիրաւի ամենայն հին վկայութիւն զօրաւոր է մեր համար։ բայց երբ իւրեանց զործով աւելի՝ քան բանիւ կը վկայեն այնպիսի անձինք, որոց դործն և խօսք պատկարանց կ'աղդեն՝ ի սիրո ամենուն, ինչպէս են Մեւրոր և Սահակ, այն ժամանակ այդ վկայութիւնն յաղթող կը լինի բոլորից։ Եւ երանելի է այն անձն որ այդպիսեաց վկայութիւնը իւր վերայ ունի, ինչպէս է Եղնիկ։

Ցաւայի է՝ « Եզնկայ Ցաղաց որոշման զանազան հերձուածոց » վերնագրով Երկասիրութեան մի ծանր կրուստն, ծովակուր լինելով Հնդկաստանէն ՚ի մեր վանս գալու ժամանակ։ Թափի թէ և այդ յիշեալ թղթոյն զուգակից էր ըստ նիմէոյն և ըստ յօրինուածոյն։

Եզնկայ յիշեալ բազմապիմի Երկասիրութիւնը տեսեր էր նաև մեծն իմաստասիրաց Յոհան Ոճնեցին, և նորա համբաւոյն արձագանքն հասեր էր և առ նա. և երբ ընդդէմ հայ Երեւութականց ոմանց կը կոչէր՝ ի վկայութիւն Երկու մեծամեծըը Սահակ և Մեւրոր, չըր կարող զանց ընել Եզնկայ անունը և բարձրաձայն շնչակել նոցա կից։ « Զորու ՚ի մէնջից ասոտի Հոգին սուրբ զարթոյց լինել զինի առաջնոյն լուսաւորիչը. զերկոսին զնոսա ասեմ սուրբս՝ զՍահակ և զՄաշոտց, և զամենեսին զլնտրեալսն զարրանեակս նոցուն և զգործակիցս՝ զԵղնակ և զայլմն » (<sup>1</sup>)։ ուր բաւական կը համարի յիշել նորա բոլոր միւս Երեւելի ընկերը միայն « և զայլմն » բառիւ։ Գողցես թէ նա է պարագուկի թարգմանչաց, կամ թէ յաշս իւր արժանացեալ գրլիւալորութեան՝ իւր գերազանց իմաստութեամբ և բարձր վարդապետութեամբ։ և թարգմանիշը շուսաւորիչը կոշելով, երբ այդ լուսաւորչաց փայլուն զինաւորք կը յիշէ՝ իրը ներկայացոցիշ այլոց, նոցա հետ կը խառնէ և զնա՝ իրը հաւասար նոցա իւր լուսով։ և նոյնպէս ներկայացոցիշ այլոց. և յետոյ ուրեմն կը յիշէ առանձնակի և զուշակաւորն Խորենացի։ Խմաստասիրի այդ գաղափարէն դիրին է գուշակել նախորդ զարուց մեծ զաղափարը նկատմամբ Եղնկայ։

Եզնկայ պայծառութեան յիշեալ ժամանակները Հայաստան ալէկոծութեան մէջ կը ծփի ըստ պատմութեան։ ներբին խոռվութիւնք և պարսկային քաղաքական բոնութիւն կը խոցուեն Սահակ հայրապետի սիրոր և կը վրգովին նորա հօտը. օտար և վարձկան հովիսներ զաւեր են սրբոյն աթոռը, և նորա հետ արտաքին իշխանութիւնը. նա չունի ուրիշ բան՝ բայց եթէ անձուկ կա-

1. Յովհ. Խմաստասէր տպ. ՚ի Վենետիկ, 1833, էջ 66.

բողոքիւն մի ձեռնապրելու և հոգալու ժողովրդեան պիտոյցը (Խոր. Գլ. կֆ.՝ կջ.)։ Այդ բանութեանց գէմ բարոյական զօրութիւն պէտք կը լինի։ առ չցաւորութեան նիւթականին հարի է որ զօրանան եկեղեցւոյ հիմունքն, երբ կը շարժին և մօտ են կործանելու հայրենեացն։ Կը փութայ հայրապեսն՝ ախոյան հանել զԵզնիկ նման նորա միւս ընտրեալ ընկերաց, տալով անոր Բագրեանդայ հովուական զաւազանը<sup>(1)</sup>։ Թէ յիրաւի Սահակ ձեռնադրեր է զԵզնիկ, յայտնի է նախ՝ զի Եզնկայ անուամբ գրազիր յիշատակարան<sup>(2)</sup>։ Մի յետ յիշելոց զնա ի շարս ընկերաց կ'ըսէ, «և ձեռնադրեալքն ՚ի նորին սրբոյ կաթողիկուէ», թէպէտեւ յայտնի շրմեր՝ քահանայի թէ եպիսկոպոս։ Երկրորդ՝ Սահակայ յաջորդներն ՄԵսորոք և Յովաէփ, որոյ ժամանակ Եզնիկ եպիսկոպոս կը կոչուի, եպիսկոպոսւթիւն չունելով՝ չին կարող ինքեանք ձեռնադրած լինել, և եպիսկոպոս ձեռնադրել՝ քահանայապետին էր սեփական։ ազա ուրեմն յիշատակարանին ակնարկութիւնը եպիսկոպոսութիւն հասկանալի է։ Երրորդ՝ հաւանական և լաւագյոն է կարծել՝ թէ շատ առաջ ձեռնադրուող լինի, և մի և զյխաւոր «յեպիսկոպոսաց» որք հանապազ պարապէին առ զորոս սրբոյն» Սահակայ (Փրա. Էջ 55)։ և յետոյ, նորա յատանճութիւնն երթալէն առաջ, իւրմէ ստիպուած՝ յանձն առաւ Բագրեանդայ տեխուութիւնը։

Բագրեանդ հոչակաւոր էր իւր ամիս յիշատակօց։ Նորա մէջ էր հոչակաւոր մեհենաշատն Բագրուան, հին հայկազանց անուանի և առաջին կրօնական սրբավայրն, ուր կը կատարուէին և նաւասարդի հանդէսք. հոն էր գերեզման Մածան քրոնապետի՝ թ. Ալուաշիսի որուոյն։ Հնն նախ ծագեցաւ հաւատոց լրցոն՝ ձեռամբ Ռսկեանց. անդ բնակեցան Սուքիսաններ և վկայեցին. անդ առաջին անգամ մկրտեցաւ Տրդատ և հայ ազգն երկնաւոր տեսլեամբ. հոն կը կատարուէր Յալշ. Մկրտչի նախապատիւ մեծահանդէս տօնախմբութիւնն ՚ի նաւասարդի, որ փոխանակեց նախկին հեթանոս հանդէսքը. անդ մերձ, և թերեւ ընդ ձեռամբ իսկ թեմին, Նպատ լեռն ՚ի Մաղկոտն՝ պատուանդան մեծին Ներսիսի, և Զիրաւ՝ ասպարէզ գարշապարաց Մուշեղայ և Սմբատոյ։ Այդ գաւառը տուաւ Պարթևն՝ իւր գործակցին խաղայ. նոյնն յօյժ սիրելի էր մեծին Սահակայ. զնոյն Գիւտ իւր բազմարդիւն աշակերտակցին խորենացոյ առաւ յետ յետ Եզնկայ, ՚ի վարձ և ՚ի սփոփան նորա ծերութեան։ Սորա հետ միացած էին Արշարունիք կամսարականաց և միջանկեալ երկու գաւառքն Գարեջէնք և Ճակատը, որպէս կարծի, ՚ի մի եպիսկոպոսական ընդարձակատարած և նախապատիւ թեմ։ — Այդ այլպիսի նուիրական զաւառ և լայնարձակ իշխանութիւն՝ մի կողմանէ մեծ և ծանր յուժ մ'էր Եզնկայ

1. Տես Եղիշէ տպ. ՚ի Վենետիկ, 1864, Էջ 46։ — Փրա. Էջ 125.

2. «Նշանագիր բանից կարգաց Եզնկանն երիցու» վերնագրով. — տես ի գրչագիրն թիւ 0, 61, Պարիսի ազգային գրատան, և ի Զ. օրին, Ազաթանգեղեայ,

վերայ, դրուած վրտահութեամբ իւր փոք կարողութեանն, և միւս կողմանէ փառաւոր և արժանաւոր վարձ նորա արդեանց, որոյ համար իւր կու տար զայն անոր մեծն Այահակ, զոր և ինքն իւր առանձնութեան տեղի ընտրեց, և բնակեցաւ՝ վերսիշեալ մկրտութեան ժամանակ ծագած երկնաւոր լուսոյ տեղույն մէջ, իւր սիրելոյն Եղինկայ ջերմ ինամոց տակ, յանձնելով իւր իշխանութիւնը Մեսրոբայ, ուր և աւանդեց իւր սրբամաքուր հոգին:

Շարունակելի

Հ. Վարդան Սոմոննեան

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒԽԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես ԵԱ. յԷջ 135)

### 16. \* Աթխար.

Ուղիղն Իթխիր, արարացի բառ, Հայերէն վաղմեսուկ: Գրուած է և Աղևար ի Վաստակոց գիրս (Գլ. Ճ. 4):

### 17. Աժրի.

Պոնտոսի կողմերը ռամկօրէն այս անուամբ յիշուի Հաճարի ժառն: Տես զայս:

### 18. Ալաժարի կամ Ալաժահիրի.

Մշեցոց շատ ծանօթ բոյս կամ թուփ մ'է: զընձի նման մանր պտուղ կու թերէ, զոր չորցուցած աղալով՝ գեղին ներկ. կու հանեն, մորթ գունաւորելու: Ամիրտու-  
գաթայ անծանօթ է այս բոյս, բայց իրմէ քիչ մի հին հեղինակ. Մատթէսու վ.  
աշակերտ Գրիգորի Տաթեւացայ, իր Վեցորեցից մեկնութեան գրոց մէջ (Գլ. 1)  
կ'ըսէ. « Ամենայն բոյսը բնական որակ ունին կանաչ. և այսմ գունոյ պատճառ  
» ուսանիմք ի ներկոցէ անտի. քանզի գծօրունն (որոյ ցեղէն է Ալաժահիրին ալ)  
» և զլեզակն յիրար խառնեն, այսինքն զօսան և զկարմիրն, ծնանի լուրջ  
» (գոյն). իսկ յորժամ յԱլաժահիրն ձգեն: որ է դեղին, կանչի (կանաշանայ). և  
» նիւթն բնական սպիտակ լինի»: — Եւրոպացիք ալ այս անուամբ կոչեն Ալ-  
զարի, այլ և Արեւելեան Տօրուն:

### 19. Ալանկիտակ.

Ոխալ գրուած է, պէտք է կարդալ Սղանկի տակ. տես այս անունս, կամ Զըե-  
անդ կամ Որդնուակ: